ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

# Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Արդի հայ պատմագիտության առաջնահերթ խնդիրներից է խորհրդային տարիներին շրջանցված մեր ժողովրդի պատմության «սպիտակ բծերի» վերացումը եւ հաճախ խեղաթյուրված պատմական իրողությունների անկողմնակալ լուսաբանումը: Խորհրդային ամբողջատիրական վարչակարգի գերիշխանության պայմաններում, երբ պետականորեն իրականացվող խիստ վերահսկողության, աննախադեպ գրաքննության, ինչպես նաեւ միահեծան տիրապետող կոմունիստական գաղափարախոսությունից փոքր-ինչ շեղման պարագայում դաժան հալածանքների կիրառման հետեւանքով ԽՍՀՄ-ում տիրում էր վախի մթնոլորտ, նույնիսկ ճանաչված եւ մեծ հեղինակություն վայելող անհատները՝ պետական գործիչները, գրողները, գիտնականները, հաճախ գերադասում էին մոռացության մատնել իրենց անցյալի որոշ դրվագներ, խուսափում մինչեւ խորհրդային կարգերի հաստատումն իրենց գործունեության մասին բարձրաձայնելուց: Նման օրինակները բազում են: Միանգամայն օրինաչափ է, որ խորհրդային վարչակարգի օրոք երկրում գործող դաժան «օրենքները» չեն շրջանցել նաեւ հայ գրողներին եւ մտավորականներին, որոնց, նվազագույնը լռություն պահպանելու պատճառով, մեղադրելը, անգամ հանդիմանելն այժմ դյուրին է: Սակայն, մեղմ ասած, արդյո՞ք նման մոտեցումը կարելի է օրինաչափ համարել, որը նշանակում է շրջանցել պատմականության սկզբունքը:

Հայ մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956) եւս խուսափել է Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում իր ծավալած գործունեության եւ Հ.Յ. Դաշնակցությանն անդամակցելու մասին բարձրաձայնելուց: Եթե 1930-ական թթ. սկզբին գրված «Ինքնակենսագրություն»-ում նա ակնարկում է 1920 թ. Երեւանում պաշտոնավարելու մասին[1], ապա հետպատերազմյան շրջանում գրած ընդարձակ «Ինքնակենսագրություն»-ում շրջանցում է այդ փաստը[2]: Ավելին, գրում է. «Սովետական իշխանության գաղա-

1 Տե՛ս Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան (ԳԱԹ), ֆ. Դ. Դեմիրճյանի, ց. 1, գ. 768, թ. 7-8:

2 Տե՛ս **Դ. Դեմիրճյան**, Անծանոթ էջեր, Երեւան, 1974, էջ 285-300. Երկերի ժողովածու 14 հատորով, հ.

փարի ընկալումը իմ մեջ եղավ 19 - 20 թվերին, երբ ինձ պատմում էին (մենշեւիկյան Թիֆլիսում) բոլշեւիկների մասին, որոնք «մեծապես նպաստում են կուլտուրային, արվեստներին ու գիտությանը»: Այնպես որ, երբ բոլշեւիկները եկան, ես քաղաքականապես որոշ չափով պատրաստ էի: Սակայն, ստեղծագործական պլանում դեռ կարգավորելու շատ բաներ կային»[3]:

Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում պահվող՝ Դ. Դեմիրճյանի անձնական արխիվի՝ «Դեմիրճյանի պաշտոնավարության հետ կապված գրագրություններ» բաժնում պահվող փաստաթղթերը վերաբերում են միայն Խորհրդային Հայաստանի գրականության եւ արվեստի ինստիտուտի գեղարվեստի բաժնի գիտքարտուղար աշխատելու տարիներին ծավալած նրա գործունեությանը[4]: Այդտեղ Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակաշրջանում Դ. Դեմիրճյանի գործունեության վերաբերյալ վավերագրեր չկան:

Գրականագետ Տիգրան Հախումյանն իր հուշերում հարեւանցի հիշատակում է Դ. Դեմիրճյանի երեւանյան գործունեությունը. «Հիշյալ քննարկումից հետո (խոսքը 1920 թ. Թիֆլիսում գրողի «Գարուն» բանաստեղծությունների ժողովածուի քննարկման մասին է – Հ. Ս.) մենք երկար ամիսների ընթացքում Դերենիկ Դեմիրճյանին այլեւս չհանդիպեցինք: Ասում էին, թե մեկնել է Հայաստան եւ աշխատում է կրթական գործով զբաղվող նախարարության մեջ: Ավելացնում էին, որ իբր նրան է հանձնված արվեստի ու գրականության գործերը տնօրինելու պաշտոնը: Թե այնտեղ ինչ գործեր է ձեռնարկել, մեզ հայտնի չէր: Հովնանյան դպրոցի սանուհիներից մեկը մերոնց (նկատի ունի Ներսիսյան դպրոցում սովորողներին – Հ. Ս.) հայտնել էր, որ ինքը Երեւանից, իր սիրելի ուսուցչից՝ Դեմիրճյանից, նամակ է ստացել, որտեղ, դժգոհությունից բացի, ուրիշ ոչ մի հաճելի տող չկա: Գրել է, թե իր ջանքերն առայժմ ոչ մի արդյունք չեն տվել եւ ափսոսանք է հայտնում այդպիսի պարտականություն ստանձնելու առթիվ»[5]: Մյուս հուշագիրները 1920 թ. Երեւանում գրողի իրականացրած աշխատանքների մասին չեն հիշատակում:

Ի դեպ, թե՛ խորհրդային եւ թե՛ հետխորհրդային տարիներին Դ. Դեմիրճյանի կյանքին ու ստեղծագործություններին նվիրված աշխատություններում[6] անդրադարձներ չկան Հայաստանի Հանրապետության օրոք նրա գոր-

XIV, Երեւան, 1987, էջ 7-20 (տե՛ս նաեւ բնագիրը՝ ԳԱԹ, ֆ. Դ. Դեմիրճյանի, ց. 1, գ. 769):

3 **Դ. Դեմիրճյան**, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. XIV, էջ 13:

4 ԳԱԹ, ֆ. Դ. Դեմիրճյանի, ց. 3, գգ. 1687-1772:

5 «Ժամանակակիցները Դ. Դեմիրճյանի մասին», կազմեց Գ. Մաղոյանը, Երեւան, 1997, էջ 220:

6 Տե՛ս «Դերենիկ Դեմիրճյանի կենսագրությունը» (համառոտ ակնարկ). **Դ. Դեմիրճյան** , Երկերի ժողովածու, հ. I, Երեւան, 1931, էջ V-VIII. **Հ. Բ. Մուրադյան,** Դերենիկ Դեմիրճյան. կյանքը եւ ստեղծագործությունը, Երեւան, 1961. **Ս. Բ. Աղաբաբյան**, Դերենիկ Դեմիրճյան, Երեւան, 1977. **Հ. Ս. Թամրազյան**, Դերենիկ Դեմիրճյան, Երեւան, 1977. **Էդ. Թոփչյան**, Դեմիրճյանի դասերը. **Դ. Դեմիրճյան**, Երկեր երկու գրքով, գիրք առաջին, Երեւան, 1977, էջ 5-23, **Գ. Ա. Մաղոյան**, Դերենիկ Դեմիրճյան, Երեւան, 1986. **Ռ. Գ.Դավթյան**, Դերենիկ Դեմիրճյանը եւ արվեստը, Երեւան, 2003, **Մ. Մ. Խաչատրյան**, Դերենիկ

ծունեության, այդ ժամանակաշրջանում հայկական մշակույթի զարգացմանն ուղղված նրա ձեռնարկումների մասին, որոնք, ամենայն հավանականությամբ, դեմիրճյանագետներին հայտնի չեն եղել:

1918 թ. նոյեմբերին ստեղծված ՀՀ հանրային կրթության եւ արվեստի նախարարության կազմում գործում էր Հնության հուշարձանների եւ արվեստի բաժին: Հաշվի առնելով ժամանակի պահանջը եւ հիմք ընդունելով նախարարության 1919 թ. հուլիսի 4-ի առաջարկը՝ ՀՀ նախարարների խորհուրդը հուլիսի 17-ին օրենք ընդունեց Հնության հուշարձանների եւ արվեստի բաժինը երկու ինքնուրույն՝ Հնության հուշարձանների պահպանման եւ Արվեստի հովանավորության բաժինների վերակազմելու մասին[7]:

Հուլիսի 18-ին ՀՀ հանրային կրթության եւ արվեստի նախարար Սիրական Տիգրանյանը նախկին նախարար Գեւորգ Մելիք-Ղարագյոզյանին առաջարկեց ստանձնել նորաստեղծ Արվեստի բաժնի վարիչի պաշտոնը: Հուլիսի 23-ին վերջինս հայտնեց իր համաձայնությունը՝ միառժամանակ Թիֆլիսում մնալու պայմանով: Սակայն բաժնի վարիչի գործառույթներ նա այդպես էլ չիրականացրեց, իսկ օգոստոսի վերջին հրաժարվեց այդ պաշտոնից[8]: Այնուհետեւ կարճ ժամանակ (մինչեւ նոյեմբերի 1-ը) Արվեստի բաժնի վարիչի պարտականությունները կատարեց երաժշտագետ Սարգիս Բարխուդարյանը[9]: Սակայն, ինչպես երեւում է, նրանից հետո նոր նշանակում չի եղել: Այսպես՝ նախարարության անձնակազմի՝ 1920 թ. հունվարով թվագրված հաստիքացուցակում Արվեստի բաժնի վարիչ չի հիշատակվում[10]:

Հայ բոլշեւիկների՝ 1920 թ. մայիսյան հակապետական ապստամբությունը ճնշելուց հետո ՀՀ Բյուրո-կառավարությունը սկսեց պետության կառավարման զանազան ոլորտներում նշանակել դաշնակցական գործիչների: Այս իրավիճակում Երեւան հրավիրվեց նաեւ ճանաչված գրող, Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ, դաշնակցական Դերենիկ Դեմիրճյանը: Վերջինս, իր իսկ վկայությամբ, պարտավորություն էր զգում գալ հայրենիք եւ ծառայել իր ժողովրդին ու նորահաստատ պետականությանը[11]: ՀՀ հանրային կրթության եւ արվեստի նախարար Գեւորգ Ղազարյանի՝ 1920 թ. սեպտեմբերի 17-ի հրամանով Դ. Դեմիրճյանը սեպտեմբերի 1-ից նշանակվեց նախարարության Արվեստի բաժնի վարիչ[12]: Նրա աշխատավարձը 18.800 ռուբլի էր:

---

Դեմիրճյանի երգիծանքը, Երեւան, 2004, [Դեմիրճյանի] կյանքի եւ ստեղծագործության հիմնական տարեթվերը, **Դ. Դեմիրճյան**, Ընտրանի, Երեւան, 2012, էջ 506-508 եւ այլն:

7 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 307, ց. 1, գ. 415, թթ. 1-2, Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երեւան, 1998, էջ 144-145:

8 ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 155, թթ. 13-15 շրջ.:

9 Անդ, գ. 360, թ. 12 շրջ.:

10 Անդ, թ. 25:

11 ԳԱԹ, ֆ. Դ. Դեմիրճյանի, ց. 1, գ. 768, թթ. 7-8:

12 ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 355, թ. 4 շրջ.:

Թեեւ Դ. Դեմիրճյանը բնակվում էր Երեւանում (Սադովայա 11 հասցեում), այդուհանդերձ նրա 28-ամյա կինը՝ Մարիամը, եւ 5-ամյա որդին՝ Վիգենը, շարունակում էին մնալ Թիֆլիսում: Աշխատավարձից, ինչպես նաեւ որպես պետական պաշտոնյա իրեն հատկացված պարենից նա բաժին էր առանձնացնում նաեւ ընտանիքի անդամների համար[13]:

Մինչեւ 1920 թ. սեպտեմբերը սոսկ թղթի վրա գոյություն ունեցող Արվեստի բաժինը Դ. Դեմիրճյանի ղեկավարությամբ սկսեց կազմակերպված աշխատանքներ իրականացնել: Անցկացվեցին տարբեր դասընթացներ, որոնք վարում էին ժամանակի ճանաչված մտավորականներից շատերը: Այսպես՝ սեպտեմբեր-նոյեմբերին բաժնի կազմակերպած դրամատիկական դասընթացներում դասավանդել են Վարդան Միրզոյանը (վարիչ եւ դասատու), ուսուցիչ Դերենիկ Դեմիրճյանը, պարուսույց Սուրեն Մխիթարյանը, հոգեբանության ուսուցիչ Ա. Շավարշյանը: Նոյեմբերին բաժնի խմբավարական դասընթացներում պաշտոնավարում էին «թեորիայի դասատու» Ս. Բարխուդարյանը եւ «դաշնակի դասատու» Աննա Աբգարյանը[14]: Ավելորդ չէ նշել, որ այս դասընթացները տեղի էին ունենում 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ վտանգված էր պետության անկախությունը:

Արվեստի բաժնի կատարած աշխատանքների մասին անփոխարինելի տեղեկություններ է պարունակում 1920 թ. դեկտեմբերի 16-ին Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Աշոտ Հովհաննիսյանին ուղղված՝ Դ. Դեմիրճյանի ընդարձակ զեկուցագիրը: Այստեղ ներկայացված է ՀՀ օրոք արվեստի ճյուղերի դրությունը, մասնավորապես՝ թատերական գործի կազմակերպման, այս ասպարեզում դերասաններ Օվի Սեւումյանի եւ Վարդան Միրզոյանի կատարած աշխատանքների, Երեւանում գործող դրամատիկական դպրոցի գործունեության, Երեւանում կոնսերվատորիա, իսկ Ալեքսանդրապոլում երաժշտական դպրոց հիմնելուն ուղղված քայլերի, Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ խմբավարական դասընթացների կազմակերպման, 1919 թ. Երեւանում կազմակերպված նկարների ցուցահանդեսի, հայ գրողներին ու արվեստագետներին տրվող օժանդակության մասին: Դ. Դեմիրճյանը հատուկ շեշտում էր կատարվող աշխատանքների «խանգարիչ հանգամանքների» մասին՝ Երեւանում թատրոնի համար հարմար շենքի բացակայության (պառլամենտը նիստեր էր գումարում նախկին ակումբի դահլիճում), եղած ծրագրերը 1920 թ. սեպտեմբերի թուրքական արշավանքի պատճառով հետաձգվելու մասին (զինվորական, ժողովրդական համերգներ, ներկայացումներ, տեղական ստեղծագործական խմբերի կազմակերպում եւ այլն)[15]:

13 Անդ, գ. 360, թթ. 144-145, գ. 356, թթ. 11-12, տե՛ս նաեւ՝ ԳԱԹ, ֆ. Դ. Դեմիրճյանի, լրացուցիչ ցուցակ, գ. 218, թթ. 1-2 շրջ.:

14 ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 360, թթ. 54-54 շրջ., 127-130:

15 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 679, թթ. 59-60 շրջ.:

Դ. Դեմիրճյանը պաշտոնավարեց նաեւ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդած առաջին օրերին: 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ ՀՀ հանրային կրթության եւ արվեստի նախարար Վահան Մինախորյանի հրաժարականից հետո, դեկտեմբերի 3-ից Խորհրդային Հայաստանի Հանրային կրթության եւ արվեստի կոմիսարիատի կառավարչի պարտականությունները ժամանակավորապես ստանձնեց նախարարի օգնական (տեղակալ) Պողոս Սոտնիկյանը[16]: Նոր կառավարության ձեւավորումից հետո Խորհրդային Հայաստանի նորանշանակ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի՝ 1920 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1 հրամանով աշխատանքից ազատվեցին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի վերածված նախկին ՀՀ հանրային կրթության եւ արվեստի նախարարության չորս ղեկավար աշխատակիցներ՝ նախարարի օգնական Պողոս Սոտնիկյանը, Արվեստի բաժնի վարիչ Դերենիկ Դեմիրճյանը, դպրոցական վերահսկիչներ Սիմեոն Շիյանը եւ Ասլան Շահնազարյանը: Նրանք իրենց հասանելիք լուծարքային նպաստները պետական գանձարանի առձեռն ֆոնդից ստացել են դեկտեմբերի 21-ին[17]: Դ. Դեմիրճյանին Արվեստի բաժնի վարիչի պաշտոնում նույն դեկտեմբերի 15-ին փոխարինել է Եղիշե Չարենցը:

Արդ, նորահայտ փաստերի հիման վրա կարող ենք արձանագրել, որ հայ ականավոր գրող Դերենիկ Դեմիրճյանը 1920 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը եղել է Հայաստանի Հանրապետության հանրային կրթության եւ արվեստի նախարարության Արվեստի բաժնի վարիչը եւ կարեւոր ներդրում է ունեցել 1920 թ. աշնանը ՀՀ մշակութային կյանքի կազմակերպման գործում:

16 ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 355, թ. 21 շրջ.:
17 ՀԱԱ, ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 1, ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 360, թ. 72 եւ շրջ.:

## РЕЗЮМЕ

С 1 сентября до 15 декабря 1920г. армянский известный писатель Дереник Демирчян (1877-1956) возглавлял отдел искуства Министерства народного образования и искусства Первой Республики Армения. Тем не менее, в советские времена, он молчал об этом и скрывал этот эпизод своей жизни. Вот в чем причина, что в исследованиях, посвященных жизни и литературного наследия Д. Демирчяна об этом нет никакой информации.

На основании новообретенных документов в статье впервые освещается деятельность Д. Демирчяна в Ереване в сентябре-декабре 1920г. Статья содержит интересные подробности неизвестны даже специалистам Демирчяна.



## SUMMARY

Since the 1st of September until the 15th of December 1920 Armenian prominent writer Derenik Demirchyan (1877-1956) was the Head of Art department of the Ministry of Public Education and Art of the First Republic of Armenia. However, in Soviet times, he has avoided to raise this fact and concealed that episode of his biography. That's the reason that in the researches devoted to the life and literary heritage of D. Demirchyan there is no information about this.

On the basis of newly discovered documents in the article the activity of D. Demirchyan in Yerevan in September-December 1920 is elucidated for the first time. It contains interesting details unknown for the specialists of Demirchyan.